ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան 02 02 2018թ. N 82-Ա

«ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ՕԲՅԵԿՏԻ) ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 20-րդ հոդվածի 2-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնին նշանակել սույն հրամանի հավելվածում նշված ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին՝ համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ N 008/S-021, N 001/B-004) N 1-Բ Հավելվածով սահմանված հավատարմագրման ոլորտներում ընդգրկված արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի:

2. «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնին նշանակել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 8-ը, տրամադրել համապատասխանության գնահատման մարմնի նշանակման վկայական՝ Ն-04 և շնորհել նույնականացնող համար՝ Ն-04(Հ-04)2018:

3. «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնին գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Է. Տարասյանին:

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

Հավելված
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի 2018թ.
---------- ի N ----Ա հրամանի

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ

ՀՀ տեխնիկական կանոնակարգեր

1. ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի «Սինթետիկ հիմքով լաքերի և ներկերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1647-Ն որոշում - միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «3208-3210 00», «3212» և «3214», «3814 00» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբեկտ չհանդիսացող արտադրանք:

2. ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի «Հանքային պարարտանյութերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1692-Ն որոշում - միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «3101 00 000 0-3105» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբեկտ չհանդիսացող արտադրանք:

3. ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1795-Ն որոշում - միայն ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի «3402», «3405», «3808», «3809» ծածկագրի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբեկտ չհանդիսացող արտադրանք:

4. ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի «Աննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 679-Ն որոշում - միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «3917», «3920», «3923» և

«3924», «3925» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբեկտ չհանդիսացող արտադրանք:

5. ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգ» № 1546-Ն որոշում - միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «4803 00», «4818», «5601», «9619 00» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբեկտ չհանդիսացող արտադրանք:

6. ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի «Օդաճնշական դողերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» № 1558-Ն որոշում - միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «4011 10 000», «4011 20 100 0», «4011 20 900 0» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբեկտ չհանդիսացող արտադրանք:

7. ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 24-ի «Վերգետնյա տրանսպորտային միջոցներում օգտագործվող անվտանգ ապակիների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» № 289-Ն որոշում - միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «7007 11 100», «7007 21 200» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբեկտ չհանդիսացող արտադրանք:

8. ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 21-ի «Քաղաքացիական և ծառայողական զենքի ու դրա փամփուշտների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» № 605-Ն որոշում - միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «9302 00 000 0», «9303», «9304 00 000 0», «9306 21 000 0», «9306 30 100 0», «9306 30 900 0», «9307 00 000 0», «9506 99 900» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբեկտ չհանդիսացող արտադրանք:

9. ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Խեցեգործական ամանեղենի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» № 1750-Ն որոշում - միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «6911

10 000 0», «6912 00» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբեկտ չհանդիսացող արտադրանք:

ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգեր

1. «Ցածրավոլտ սարքավորումների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 004/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

2. «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

3.«Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 007/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

4. «Խաղալիքների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 008/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

5. «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 009/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

6. «Ավտոմոբիլային և ավիացիոն բենզինին, դիզելային և նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին և մազութին ներկայացվող պահանջների մասին»(ՄՄ ՏԿ 013/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

7.«Հացահատիկի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 015/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

8.«Գազանման վառելիքով աշխատող ապարատների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 016/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

9. «Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն» (ՄՄ ՏԿ 020/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

10.«Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

11.«Սննդամթերքի մակնշման մասին» (ՄՄ ՏԿ 022/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

12.«Մրգերից և բանջարեղեններից արտադրված հյութամթերքների տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 023/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

13. «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 024/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

14.«Սննդային հավելումների, բուրավետիչների և օժանդակ տեխնոլոգիական միջոցների անվտանգության պահանջների մասին» (ՄՄ ՏԿ 029/2012) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

15. «Քսանյութերին, յուղերին և հատուկ հեղուկներին ներկայացվող պահանջների մասին» (ՄՄ ՏԿ 030/2012) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

16.«Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 033/2013) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

17. «Մսի և մսամթերքի անվտանգության տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 034/2013) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

18. «Ծխախոտային արտադրանքի մասին տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 035/2014) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

19. «Որպես վառելիք օգտագործելու համար նախատեսված հեղուկացված ածխաջրածնային գազերին ներկայացվող պահանջներ» (ՄՄ ՏԿ 036/2016) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

20.«Ձկան և ձկնամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 040/2016) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ